ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

13 ապրիլի 2016 թվականի **թիվ 2** քաղ. Մոսկվա

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին համապատասխան՝ ակտերի և միջազգային պայմանագրերի մշակման աշխատանքային ծրագրի և Բելառուսի Հանրապետության նախագահ Ա. Գ. Լուկաշենկոյի՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների ղեկավարներին ուղղված 2015 թվականի հունվարի 1-ի ուղերձում ներկայացված՝ բելառուսական նախագահության առաջնահերթությունների իրականացման վերաբերյալ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի գործողությունների ծրագրի իրականացման ընթացքի մասին

Ի գիտություն ընդունելով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին համապատասխան՝ ակտերի և միջազգային պայմանագրերի մշակման աշխատանքային ծրագրի և Բելառուսի Հանրապետության նախագահ Ա. Գ. Լուկաշենկոյի՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների ղեկավարներին ուղղված 2015 թվականի հունվարի 1-ի ուղերձում ներկայացված՝ բելառուսական նախագահության առաջնահերթությունների իրականացման վերաբերյալ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի գործողությունների ծրագրի իրականացման ընթացքի մասին տեղեկությունները՝

1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովին՝

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հետ համատեղ շարունակել ակտերի և միջազգային պայմանագրերի մշակման

աշխատանքային ծրագրի շրջանակներում փաստաթղթերի մշակման աշխատանքը՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի և Բելառուսի Հանրապետության նախագահ Ա. Գ. Լուկաշենկոյի՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների ղեկավարներին ուղղված 2015 թվականի հունվարի 1-ի ուղերձում ներկայացված՝ բելառուսական նախագահության առաջնահերթությունների իրականացման վերաբերյալ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի գործողությունների ծրագրին համապատասխան.

Եվրասիական միջկառավարական խորհրդի հերթական նիստի ընթացքում զեկուցել նշված աշխատանքային ծրագրի և գործողությունների ծրագրի իրականացման ընթացքի մասին:

2. Սույն Կարգադրությունն ուժի մեջ է մտնում «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցում՝ Եվրասիական տնտեսական միության պաշտոնական կայքում, դրա հրապարակման օրվանից:

Եվրասիական միջկառավարական խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	**Բելառուսի Հանրապետությունից՝**	**Ղազախստանի Հանրապետությունից՝**	**Ղրղզստանի Հանրապետությունից՝**	**Ռուսաստանի Դաշնությունից՝**